# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հունիսի 2020 թվականի N 1148-Ն Գ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 04
Ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հունիսի 2020 թվականի N 1149-ՆԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 04
Ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հունիսի 2020 թվականի N 1150

## ԱՆԴՐԱՆԻԿ ԷԴՈՒԱՐԴԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Հայաստանի Հանրապետության ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի 27 ապրիլի 2020 թվականի թիվ 56/3-2969 գրության հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի բ) կետի հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարչական վարույթ՝ Անդրանիկ Էդուարդի Առաքելյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Հայաստանի Հանրապետության ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի 27 ապրիլի 2020 թվականի թիվ 56/3-2969 գրությանը կից 22 ապրիլի 2020 թվականի արձանագրության համաձայն՝ 2020 թվականի ապրիլի 22-ին Անդրանիկ Առաքելյանը իր սեփական հողատարածքից շինարարական բետոնե մնացորդը և ավազը տեղափոխել է Շահումյան ֆաբրիկային կից հարակից տարածք: Անդրանիկ Առաքելյանը հայտնել է, որ տարածքը մաքրելու է իր ուժերով և լցնելու է տարածքի փոսերը:

2020 թվականի մայիսի 12-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի մայիսի 25-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել Անդրանիկ Էդուարդի Առաքելյանը:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի կողմից 03 հունիսի 2020 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի կողմից ուղարկված նկարների տեսողական զննության՝ թափված շինարարական աղբի մոտավոր ծավալը կազմել է 5-8 խմ:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ չսահմանված ու չնախատեսված տեղերում և վայրերում աղբամուղներից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից կամ աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված փոխաբեռնման կայաններից կամ աղբավայրերից դուրս մեկից ավելի խորանարդ մետր ծավալով շինարարական աղբ թափելը՝ առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով, 245-րդ, 279-րդ հոդվածներով և 2191-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

**ՈՐՈՇԵՑԻ.**

1. Անդրանիկ Էդուարդի Առաքելյանին ենթարկել վարչական պատասխանատվության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Պարտավորեցնել Անդրանիկ Էդուարդի Առաքելյանին տուգանքի գումարը վճարել 900235401537 հաշվեհամարին:

3. Պարտավորեցնել Անդրանիկ Էդուարդի Առաքելյանին մեկշաբաթյա ժամկետում տեղափոխել շինարարական աղբը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 05
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունիսի 2020 թվականի N 1151

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2411 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Լոռու գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղ ԱՍ-ի տնօրեն Վ.Բաղդասարյանի գրությունը, Վանաձոր համայնքի ղեկավարի 23 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 2411 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 23 դեկտեմբերի 2019 թվականի «Վանաձոր քաղաքի Զուխաջյան փողոց թիվ 2/2Ա հասցեում Հայ-Ռուսական «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված շինությունները, ինքնակամ ձևափոխումները օրինականացնելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2411 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1. Որոշման նախաբանը «գրությունը,» բառից հետո լրացնել «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը,» բառերով և «ղեկավարվելով» բառից հետո լրացնել «ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով,» բառերով:
2. Որոշման 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ և 4-րդ կետերով.
«3. Հաստատել Վանաձոր քաղաքի Զուխաջյան փողոց թիվ $2/2^Ա$ հասցեում գտնվող, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն 0,46հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից՝ որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողեր և գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների հողերից՝ որպես հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողեր:
4. Փոխել Վանաձոր քաղաքի Զուխաջյան փողոց թիվ $2/2^Ա$ հասցեում գտնվող 678.1քմ մակերեսով գործարանի գործառնական նշանակությունը՝ արտադրականից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ վարչական մասնաշենք:»
3. Որոշման 3-րդ կետը կարդալ որպես 5-րդ կետ և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«5. Սույն որոշման մեջ նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Զուխաջյան փողոց, թիվ 2/2-3/2 վարչական մասնաշենք:»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 05
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունիսի 2020 թվականի N 1152

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1-6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆՈՆՆԱ ԳԱԳԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՊԱՀԵՍՏԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նոննա Գագիկի Հովսեփյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26052020-06-0039 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով և 32-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոցի թիվ 1-6/1 հասցեում Նոննա Գագիկի Հովսեփյանի սեփականության իրավունքով պատկանող պահեստը և դրա զբաղեցրած հողամասը՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոցի թիվ 1-6/1 հասցեում գտնվող տարանջատված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցեներ.

ա) 0.763376հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 1467.37քմ ընդհանուր մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Կ.Դեմիրճյան փողոց, թիվ 1-6/1 պահեստ (հատակագիծ թիվ 1).

բ) 0.08հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 10.56քմ մակերեսով պարսպի փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 1-6/2 պարիսպ (հատակագիծ թիվ 2):

գ) 0.011884հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 118.84քմ մակերեսով ծածկի փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 1-6/3 ծածկ (հատակագիծ թիվ 3):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 05
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հունիսի 2020 թվականի N 1153

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ՔՇՀ-2 ԹԻՎ 59Գ ՇԵՆՔԻ ԹԻՎ 7Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արա Մարտիրոսի Մանուկյանի, Սիլվա Սաղաթելի Մաթոսյանի, ով հանդիսանում է նաև Մարտիրոս Արայի Մանուկյանի լիազորված անձը, Զոյա Արայի Մանուկյանի, ով հանդիսանում է նաև Վանիչկա և Վահե Արտավազդ Դավթյանների օրինական ներկայացուցիչը և Վանիչկա, Վահե Արտավազդ Դավթյանների օրինական ներկայացուցիչ Արտավազդ Վանիչկայի Դավթյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1932571 վկայականը, 09.03.2020թ. թիվ 645 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 504-20200309-90-4505571), 19.05.2020թ. տարաժամկետ վճարումով անշարժ գույքի առուվաճառքի թիվ 87/121 (նոտարական ակտի կոդ: 504-20200519-2-4554438) պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Տարոն-4 ՔՇՀ-2 թիվ 59գ շենքի թիվ 7ա հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-4 թաղամաս, ՔՇՀ-2, թիվ 59գ շենք, թիվ 7-1 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 05
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

05 հունիսի 2020 թվականի N 1154

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 80 ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼՈՒՄ ՔՆԱՐԻԿ ԳԱՌՆԻԿԻ ՔԱՐԻՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ՝ ՄԱՌԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քնարիկ Գառնիկի Քարիմյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 600829 վկայականը, 30.04.2020թ. «Նարեկ» համատիրության կողմից հաստատված Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 80 շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերի համաձայնության վերաբերյալ դիմումը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 11.05.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-72/20 Ի եզրակացությունը, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով և 42-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Քնարիկ Գառնիկի Քարիմյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 80 շենքի ծավալում կատարված 2.98քմ մակերեսով ինքնակամ կառույցը՝ մառանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 2.98քմ մակերեսով ինքնակամ կառուցված մառանի օրինականացման համար սահմանված վճարը՝ 12520 (տասներկու հազար հինգ հարյուր քսան) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Աղայան փողոց, թիվ 80 շենք, թիվ 24 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 05
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունիսի 2020 թվականի N 1155

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալեքսանդր Հարությունյանի դիմումը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ, 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

1. Ալեքսանդր Հարությունյանին 2020 թվականի հունիսի 08-ից ընդունել աշխատանքի Վանաձորի համայնքապետարանում որպես տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

2. Աշխատավարձը՝ ամսական 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ պաշտոնային դրույքաչափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 05
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2020 թվականի N 1156

## ՔՆԱՐԻԿ ԳԱՌՆԻԿԻ ՔԱՐԻՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 80 ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ՝ ԹԻՎ 24 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ՝ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ, ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քնարիկ Գառնիկի Քարիմյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի դրանցման թիվ 600829 վկայականը, 30.04.2020թ. «Նարեկ» համատիրության կողմից հաստատված Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 80 շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերի համաձայնության վերաբերյալ դիմումը, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 14.05.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-72/20 Ի եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի ա) և գ) ենթակետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով և 42-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Քնարիկ Գառնիկի Քարիմյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 80 շենքի ծավալից դուրս՝ թիվ 24 բնակարանին կից ինքնակամ իրականացված կառույցը՝ 32.48քմ մակերեսով բաց պատշգամբը և բնակարանում կատարված թվով 2 ինքնակամ ձևափոխումները:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի զբաղեցրած հողամասը անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում է շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Շենքում առկա այլ ինքնակամ կառույցներ չկան:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված 32.48քմ մակերեսով ինքնակամ իրականացված կառույցի՝ բաց պատշգամբի օրինականացման համար սահմանված վճարը՝ 20470 (քսան հազար չորս հարյուր յոթանասուն ) դրամ և թվով 2 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 4200 (չորս հազար երկու հարյուր) դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Աղայան փողոց, թիվ 80 շենք թիվ 24 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

*06901936*

2020թ. հունիսի 08
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2020 թվականի N 1157

### ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴԱՎԻԹ ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալինա Իվանովնա Լուկաշի դիմումը՝ անչափահաս Դավիթ Նարեկ Մելքոնյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020թ. մայիսիսի 26-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 7, կետ 2), հաշվի առնելով, որ անչափահասը միայնակ մոր երեխա է, և նրա մայրը մահացել է, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Կ.Դեմիրճյան փողոցի թիվ 32 շենքի 16 բնակարանի բնակիչ Ալինա Իվանովնա Լուկաշին (ծնված՝ 23.08.1961թ., անձնագիր՝ AT 0293092, տրված՝ 30.10.2019թ., 018-ի կողմից) նշանակել անչափահաս Դավիթ Նարեկ Մելքոնյանի (ծնված՝ 06.12.2013թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 303445, տրված՝ 10.12.2013թ., Վանաձորի ՔԿԱԳ տ/բ-ի կողմից) նկատմամբ խնամակալ մեկ տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 08
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2020 թվականի N 1158

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ռ.ԲՈՇՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14/1-1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ՝ ՀԱՑԱՏԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԼԻԹ ՅՈՒՐԻԿԻ ՉՈՔԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիլիթ Յուրիկի Չոբանյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21052020-06-0011 և Լիլիթ Յուրիկի Չոբանյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27092018-06-0003 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Ռ.Բոշյան փողոց թիվ 14/1-1/1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 15.5քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21052020-06-0011 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 70130 (յոթանասուն հազար հարյուր երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Լիլիթ Յուրիկի Չոբանյանին՝ հասարակական սպասարկման օբյեկտի՝ հացատան ընդլայնման նպատակով:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Լիլիթ Յուրիկի Չոբանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 15.5քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 08
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հունիսի 2020 թվականի N 1159

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ) 1-ԻՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՉԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խաչիկ Հովհաննեսի Համբարյանի (ծնված՝ 21.02.1936թ.) դիմումը, 29.07.1991թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 30.04.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-70/20 Ի եզրակացությունը, «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված մասնագիտական եզրակացությունը, տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 1-ին փողոց 3-րդ նրբանցք թիվ 2 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1000.0քմ և դրան կից 300.0քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1964-1994թ.թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1300.0քմ:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Խաչիկ Հովհաննեսի Համբարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 1-ին փողոց 3-րդ նրբանցք թիվ 2 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1000.0քմ մակերեսով հողամասին կից 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Խաչիկ Հովհաննեսի Համբարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 1-ին փողոց 3-րդ նրբանցք թիվ 3 հասցեի 1300.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 1-ին փողոց 3-րդ նրբանցք թիվ 2 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամաս, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 2/3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 09
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2020 թվականի N 1160

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 5-2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՏՅՈՄ ԼՅՈՎԱՅԻ ԿՈԼՈԴՅԱԺՆԻԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտյոմ Լյովայի Կոլոդյաժնիի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04052020-06-0048 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց 2-րդ նրբանցք թիվ 5-2/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 38.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 34.55քմ) ավտոտնակը 79800 (յոթանասունինը հազար ութ հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 32.8քմ մակերեսով հողամասը 96440 (իննսունվեց հազար չորս հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արտյոմ Լյովայի Կոլոդյաժնիին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արտյոմ Կոլոդյաժնիի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 09
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2020 թվականի N 1161

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի <<ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 82 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 82 որոշման հավելվածում կատարել լրացում ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 09
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հունիսի 2020 թվականի N 1162

## ՌՈՒԶԱՆՆԱ ԳԱՌՆԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԲՆԱԿՄԱԿԵՐՊՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 163-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի Երևանյան խճուղու թիվ 90 շենքի թիվ 213 սենյակի բնակիչ Ռուզաննա Գառնիկի Մարտիրոսյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Ռուզաննա Գառնիկի Մարտիրոսյանին, Ինա Վաչիկի Մարտիրոսյանին և Գոռ Ռազմիկ Մարտիրոսյանին հատկացնել ժամանակավոր բնակմակերպս՝ Երևանյան խճուղու թիվ 90 հանրակացարանի թիվ 216 սենյակը:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 2016 թվականի փետրվարի 26-ի «Սամվել Զավենի Զարգարյանին ժամանակավորապես սենյակ հատկացնելու մասին» թիվ 163-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 09
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2020 թվականի N 1163

### ԳԵՎՈՐԳ ԷԴՈՒԱՐԴԻ ԼՈՌԵՑՅԱՆԻՆ ԲՆԱԿՄԱԿԵՐԵՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ԹԻՎ 1075 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաք Վանաձոր Ուսանողական փողոցի թիվ 14 շենքի թիվ 326 սենյակի բնակիչ Գևորգ Էդուարդի Լոռեցյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Գևորգ Էդուարդի Լոռեցյանին հատկացնել ժամանակավոր բնակմակերես՝ Վանաձոր համայնքի Ուսանողական փողոցի թիվ 14 հանրակացարանի թիվ 321 սենյակը:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 25-ի «Ասատուր Հովհաննեսի Ալևորյանին բնակմակերես հատկացնելու մասին» թիվ 1075 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 09
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

09 հունիսի 2020 թվականի N 1164

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 7/1-3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Հենրիկի Ղամբարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02062020-06-0014 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոց թիվ 7/1-3 հասցեում գտնվող Արթուր Հենրիկի Ղամբարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.0252հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 09
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2020 թվականի N 1165

### ՄԱՐԻՆԵ ԶԱՎԵՆԻ ԶԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԲՆԱԿՄԱԿԵՐԵՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 1503-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի Երևանյան խճուղու թիվ 90 շենքի թիվ 322 սենյակի բնակիչ Մարինե Զավենի Զարգարյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Մարինե Զավենի Զարգարյանին և Միլենա Արթուր Զարգարյանին հատկացնել ժամանակավոր բնակմակերես՝ Երևանյան խճուղու թիվ 90 հանրակացարանի թիվ 301 սենյակը:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի «Նազելի Վլադիմիրի Գավալյանին ժամանակավորապես սենյակ հատկացնելու մասին» թիվ 1503-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 09
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունիսի 2020 թվականի N 1166

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 16 ՇԵՆՔԻ ԹԻՎ 33 ԵՎ ԹԻՎ 16-1/31 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏՅՈՄ ԱՐԹՈՒՐԻ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտյոմ Արթուրի Ծատուրյանի լիազորված անձ Արմենուհի Ժորայի Ծատուրյանի դիմումը, 26.11.2019թ. տրված թիվ 3033 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20191126-90-4330506) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23082019-06-0002 և թիվ 02092019-06-0018 վկայականները, Վանաձոր համայնքի ղեկավարի 13 մայիսի 2020 թվականի թիվ 23 ավարտական ակտը (շահագործման թույլտվության), Վանաձոր համայնքի ղեկավարի 01 հունիսի 2020 թվականի թիվ 1104 որոշումը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 16 շենքի թիվ 33 և թիվ 16-1/31 հասցեներում գտնվող Արտյոմ Արթուրի Ծատուրյանին սեփականության իրավունքով պատկանող շինությունները՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-րդ կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 16 շենք, թիվ 33 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունիսի 2020 թվականի N 1167

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԵՌՅԻ ՓՈՂ ԹԻՎ 23Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՌԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ծովինար Սուրենի Մնացականյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1917390 վկայականը, 07.05.2020թ. սեփականության իրավունքի թիվ 911 (նոտարական ակտի կոդ: 843-20200507-105-4544334) և ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 912 (նոտարական ակտի կոդ: 843-20200507-84-4544236) վկայագրերը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Լեռյի փող թիվ 23գ հասցեում գտնվող մառանին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Լեռյի փողոց, թիվ 23-3 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 10
ք.Վանաձոր